



Գրական և Գեղարդիտեսակեր

Տարեգիրք

Ա.

ԿԱԶՄԵՅԻՆ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ Յ.Ճ.ՍԻՐՈՒՆԻ

1914 - Կ. ՊՈԼԻՍ



ԼՕՌՈՒ ԳՈՒԹԱՆԵՐԳԸ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳԻՒՂԻ ՈՃՈՎ

ՆԵՐԱԾԱԿԱՆԸ

Հօռում, տակաւին, գործ են ածում հին ձեւի՝ նահապետական գութան: Որովհետեւ, այսպիսի գութանով, առանձին առանձին վար անել չեն կարող, ուստի, մի քանի տուն միանում են, տեղական ոճով ասենք, մօտիւր են դառնում, կամ՝ հարկադրանում՝ հարկադրաբար դառնում, մէկ գութան լծում՝ տասներկու լուծ, ու, փոխադարձ օգնութեամբ, վար անում: Համկալ կամ մօտկամ են դառնում, բնականաբար, միմեանց առաւել համակրող ընտանիքներ:

Երբ նախապատրաստութիւնը վերջանում ու տասներկու լուծը լրանում է, որոշեալ օրը, ճաշից յետոյ՝ իրիկնադիմիկ, կազմ և պատրաստ, դուրս են գալիս գիւղէն ու գնում համկալների հողերը՝ հերթով վարելու և, սովորաբար, առաջին օրը և առաջին անգամին գուրանաւոր՝ մանկալի արտը, այսինքն այն մարդու, որին պատկանում է գութանը և որի հետ մօտկամ են լինում միւսները: Այդ օրը գործ են դնում հողը. այսինքն սկսում են՝ մի քանի սկօս են բաց անում, որպէսզի գիշերավարը հեշտութեամբ կատարեն:

Հողի ծայրը գնալուն պէս՝ նախ շտկում են գութանը, ապա հօտաղները լծերի վրայ են թռչում և յետոյ, խօփը հողի կուրծքը պատռելուն պէս, մաճկալն ասում և քիւ՝

Օխնելի Աստո՛ւ:

(Օրհնեալ է Աստուած)

Յետոյ աւագ հօտաղը շարունակում է, նոյնպէս թիւ՝

Ամենան ժամ, Տէր Աստո՛ւ:

(Յամենայն ժամ, Տէր Աստուած)

Աստուած փառաբանելէն յետոյ՝ սկսում են ձայնով առաւել տալ բուն գութաները:

Առաւել են ասում երկու արտի միջոցում: պարապ ու անմշակ մնա-
լիք հողին: Այդ բառը, գեղջուկի բերանում; այլևայլ, կամ, նոյնիսկ,
միեւնոյն վայրերում, հնչափոխութեան օրէնքով, այս ձեւերն է առել:

Ա. «Առաւել»ի «ա»ն ընկել է և դառել՝ ուււել:

Բ. «Մաւել»ի «աւ»ը սղուել է ու եղել՝ ոււել:

Գ. «Մոսել»ի «ե»ը կրճատուել է ու առաջ եկել՝ ուո:

և Դ. «Մոջ»ի «չ»ն ընկել է և դարձել ու:

Հստ պահանջման տեղի՝ եղանակի կամ արագութեան, երգի ըն-
թացքում, գործ են անում այս բաներէն մէկը կամ միւսը:

Բուն գութաներզն սկսում է, կրկին, մաճկալը, կամ, երբեմն,
աւագ հօտաղը և այն՝ վերի թիւ աղօթքի բառերով, բայց, այս ան-
գամ, նախ լծկան անասուններին է ձայնում՝ հօ բացազանչելով, ապա
բուն աղօթքը կցում լայն ու արձակ երգելով:

Հօ :

Օխնելի Ասոճ :

և, մինչ մաճկալը քաշում է դեռ վերջին վանկի ձայնը, միւսները՝ բո-
լոր գութանաւորներն ի միասին, երզն առնում են նրա բերանից և,
աշխոյժ ու պայծառ, եռանդուն ու ազատ, ձայնակցում են եղանակելով:

Յիւելի Ասոճ:

Հօ, հօ.

Եօ-ւի, հօ, հօ-հօ-հօ, հօ:

յետոյ շարունակում են լծկաններին քաջալերող, արագ ու զուարթ
ոճով:

Պոկրե, զո՛ւկչ,

Հօ-հօ՛յ, Եօ-ւի.

Ա՛ն, հա՛ գո՛ւկչ,

Հօ-հօ՛յ, Եօ-ւի.

Տա՛ր, հա՛ գո՛ւկչ,

Հօ-հօ՛յ, Եօ:

Նոյնը կրկնում են, այլևայլ բառերով, երկու անգամ եւս:

Լուսը լուսացաւ

Հա՛-հա՛,

Փա՛նֆ, Քն՛գ, ՏԿ՛ր.

Բարին շուսացաւ:

ՀԿ՛, հԿ՛-հԿ՛-հԿ՛, օ՛-հօ՛յ.

Եօ-ւի, հօ, հօ-հօ-հօ, հօ:

Պոկրե, զո՛ւկչ,

Հօ-հօ՛յ. Եօ-ւի.

Ա՛ն, հա՛ գո՛ւկչ,

Հօ-հօ՛յ Եօ-ւի.

Տա՛ր, հա՛ գո՛ւկչ,

Հօ-հօ՛յ, Եօ:

Աղօթքան բացուաւ,
Հաւ-հաւ,
Փաւոք, Քնճ, փառք.

Մեր ժամը լրացուաւ:
Հէ, հէ-հէ-հէ, օ-հօյ':
Եօ-աւ, հօ, հօ-հօ-հօ, հօ:
Պոկրէ, գո՛ւկ՛շ,
Հօ-հօյ', եօ-աւ.
Ա՛ն, հաւ գոսկ՛շ,
Հօ-հօյ', եօ-աւ.
Տա՛ր, հաւ գոսկ՛շ,
Հօ-հօյ', եօ:

Ապա յաջորդում է մի հանդարտիկ, քնքշիկ ու մեղմիկ եղանակ,
ուր իւրաքանչիւր լծկան, անուն անուն, շոյում ու փայփայում են, այս
սրտաբաց ու զեղուն բառերով.

Պոկրէ, ջա՛ն, հօ, պո՛րօ,
Հօ, պոխ՛զի, ջա՛ն,
Հօ, ո՛շ, ա՛յ, հօ, ո՛շ, ա՛յ,
Քն՛ մա՛սա՛յ.
Շի՛մա՛յ, ջա՛ն, հօ, ո՛շ, ա՛յ,
Քն՛ մե՛ննի՛ւ.
Հա՛յի՛ն, ջա՛ն հօ, ո՛շ, ա՛յ,
Հօ, ո՛շ, ա՛յ, հօ, ո՛շ, օ:

Շարունակութիւնն է կրկնութիւն առաջին մասի:

Եզնարած, քր՛նի
Հաւ-հաւ,
Վէր կսոցիք, գոսքա՛նուր.

Գութանը բանի:
Հէ, հէ-հէ-հէ, օ-հօյ',
Եօ-աւ, հօ, հօ-հօ-հօ, հօ:
Պոկրէ, գո՛ւկ՛շ,
Հօ-հօյ', եօ-աւ.
Ա՛ն, հաւ գոսկ՛շ,
Հօ-հօյ', եօ-աւ.
Տա՛ր, հաւ գոսկ՛շ,
Հօ-հօյ', եօ:

Է՛ վերջին փառաքշական կտորի.

Պոկրէ, ջա՛ն, հօ, պո՛րօ,
Հօ, պոխ՛զի, ջա՛ն.
Հօ, ո՛շ, ա՛յ, հօ, ո՛շ, ա՛յ,
Քն՛ մա՛սա՛յ
Շի՛մա՛յ, ջա՛ն, հօ, ո՛շ, ա՛յ,
Քն՛ մե՛ննի՛ւ.

Հա՛յին, ջա՛ն, հօ՛, ոճ՛, ա՛յ,
Հօ՛, ոճ՛, ա՛յ, հօ՛, ոճ՛, օ՛:

Երբ այսպէս Օխնելի Աստոծն ու Յիչելի Աստոծն իր սարօք ասում,
պրծնում են, աւագ հօտաղն իջնում է եզների ուսէն, դուրս է գալիս
լծի մէջէն, փոքր ինչ հեռանում է գութանէն ու ձախ ձեռքն ականջին
դնելով և աջովը ճիպտոր շարժելով՝ երգում է՝

Գալիս, գալիս է,
Հա՛-հա՛,
Այ, ան՛չ-վրս, ան՛չ-վրս,

Ակր լալիս է:

և վագելով գնում, թռչում, նստում է լծի վերայ, առանց երգելը դադարեցնելու և, բանաստեղծական այդ հրաշալի ժամին, թեւ է առնում գութանը, թռչում ու իր հետ շունչ է տալիս վեց հօտաղին, որոնք տասներկու լծկան են քշում՝ ցնծալով, և շրջակայ լեռներն ու ձորերը մէկտեղ թնդալով:

Հէ՛, հէ՛-հէ՛-հէ՛, օ՛-հօ՛յ
Եօ՛-ա՛ հօ՛, հօ՛-հօ՛-հօ՛, հօ՛:

Պո՛կ՛րէ, գո՛ւմէ՛շ,

Հօ՛-հօ՛յ, Եօ՛-ա՛.

Ա՛ն, հա՛ գոմէ՛շ,

Հօ՛-հօ՛յ, Եօ՛-ա՛.

Տա՛ր, հա՛ գոմէ՛շ,

Հօ՛-հօ՛յ, Եօ՛:

Այսպէս երգում են այնքան, որ գութանը հասնում է հողի ծայրը, ուր խաղուն ու կայտառ ձայնով աւետիք են տալիս լծկաններին, թէ հանգստի ժամը հասնում է, ուստի անասուններն աւելի աշխուժով ու ճկուն են քաշում գութանը՝ շարժելով սիրունիկ պոչուկները: Նոքա շատ լաւ հասկանում են, առաւելը հասնելուն պէս, հանգիստ են առնելու: մինչեւ որ հօտաղները գութանը հանեն, շրջեն ու տեղաւորեն միւս ահօտի ձբի բերանը: Առաւելին մօտեցած ժամանակ երգում են այս կտորը, որ եղանակի վերջաբանն է և ամենարագն է:

Հօ՛յ, դո՛ւ երա, հօ՛-ա՛,

Հօ՛յ, դո՛ւ երա, հօ՛-ա՛,

Հօ՛յ, դո՛ւ երա հօ՛-ա՛.

Հօ՛-նօ, (10 անգամ) հօ՛-նօ.

Հօ՛-նօ, (5 անգամ) հօ՛-նօ:

Հօ՛-նօ, (5 անգամ) հօ՛-նօ:

Հօ՛յ, ու՛նչ ա, հօ՛-ա՛,

Հօ՛յ, ու՛նչ ա, հօ՛-ա՛,

Հօ՛յ, ու՛նչ ա, հօ՛-ա՛.

Հօ՛-նօ, (10 անգամ) հօ՛-նօ.

Հօ՛-նօ, (5 անգամ) հօ՛-նօ.

Հօ՛-նօ, (5 անգամ) հօ՛-նօ.

Հօ՛. դո՛ւ Ե՛րա, հօ՛:

Սակայն այս դեռ գործը դնելու ժամանակն է. այնպէս ժիր ու կրակ կտրած չեն քշում, ինչպէս, օրինակ, գիշերն ու լուսադէմին, երբ արդէն գործը դրուած է լինում: Գիշերն է, որ հողի մեծ մասը վարում են: Գիշերն է, որ հարեւան գութաններն իրար հետ մրցում են մտնում՝ եանաշ չշում: Իւրաքանչիւր հօտաղ պիտի աշխատէ՝ իւր գութանի պատիւը բարձր պահել, յաղթութիւնը տանել ու եանաշն առնել. ուստի քշելու եռանդ, ձեւ ու հնար են ստեղծում, ձեռքէն եկածն անում, որ մրցման փառքը շահն: Գութան քշելու գործում մեծ դեր է կատարում, առաւելապէս, աւագ հօտաղը՝ սասկիւի լուծը վարողը: Այստեղ յիշենք որ իւրաքանչիւր զոյգ լուծ իր յատուկ անունն ունի: Օրինակ, Վարդարլուրի համկայներէն մէկի գութանն այս կազմն ունէր:

Լծի Համարք	Լծի Անունք	Լծկանները		Երկու լծին Մէկ հօտաղ
		Սգ	Գոմէօ	
ա	Ա մ ք ո լ	2	0	ա + ք
բ	Ս ա ծ ի լ	0	2	
գ + դ	Ս ա ս կ ե փ	2	2	գ + դ
ե + զ	Մ ի ջ ն ա լ ու ծ	2	2	ե + զ
է + ը	Խ ն ձ ու ռ ա լ ու ծ	2	2	է + ը
թ + ծ	Հ օ ռ ֆ ա ս ա կ	2 + 2	0	թ + ծ
ծ ա + ծ ք	Հ օ ռ ի ֆ	2 + 2	0	ծ ա + ծ ք

Չանազան գիւղերում, հանդամանքների բերմունքին նայելով, գութանի կազմն ու լուծերի անուններն, աւելի կամ պակաս, փոփոխութիւն են կրում. օրինակ՝ ամոյուոր, հորեւոր, ուժուոր, ւկսուուոր, խարզակտուն, խնձորտուն, փոշետուն, մուրսարտուն և այլն:

Գործն ու երգը վարողն է աւագ հօտաղը. եթէ նա նկատում է, որ հօտաղը կամ մաճկայն անուշադիր են՝ չեն քշում, փոխանակ գոմշի անունը տալու և խրախոյս կարդալու, անուշադիրներին է դիմում. այսպէս օրինակ, երբ երգում է գալիս, գալիս ա՛ և տեսնում, որ մէկը չի քշում, անմիջապէս վրայ է բերում Քշի՛, հօտաղ բացազանչելով և ապա շարունակում է՝ Այ, ակը շալիս է, և այլն: Կամ, երբ տեսնում է, որ չեն երգում, բարկանում, զայրանում է, որ քշելու ժամանակ չեն երգում՝

ասելով՝ Հօրիքն եղաւ, ա՛յ շաղիկ հօտաղ՝ ա՛յ համբ հոտող, այսինքն՝ երգի՛ր, աւել տուր՝ Ռաւելն եղաւ, և այլն։

Յայտնի մաճկալները, եզնարածները, հօտաղները կարողանում են ինքնուրոյնութիւն ու թարմութիւն մտցնել գութաներգի՝ Հօ-նօւելի մէջ՝ նորանոր բառեր ու բաներ աւելացնելով. ստեղծելով՝ տեղին ու վայրկեանին համապատասխան։ Իւրաքանչիւր փոփոխութիւն, իւրաքանչիւր արտասովոր բան գութանաւորի ունի է գրաւում և իսկոյն, երգի միմիջոցաւ, արտայայտութիւն գտնում։ Օրինակ, վար են անում գիւղի դիմաց. ամբողջ գիւղը խոր քնի մէջն է. դիցուք երախան լաց է լինում. մայրը ճրագ է վառում՝ հոգալու համար, որ լացը կտրի։ Այս ճրագ վառելը գութանաւորին երեւալուն պէս, ուշադրութիւն է դարձնում և ահա, աւագ հօտաղը երգում է, իբրև աւել. «Ա՛յ ճրագ փառող հարսին եւլ ասում հա՛» և այլն։ Կամ, լուսաբացին տեսնում է, որ գիւղի հարսները, կուժերն ուսած, աղբիւր են գնում ջրի. հօտաղն այս նկատելով ձայնում է. «Ա՛յ, աղբուրը գնացող հարսին եւլ ասում հա՛» և այլն. և կամ, երբ իրենց համար, հաց են բերում, հեռուից նշմարելով, ուրախ ձայն է տալիս. «բարբլիս ա՛, խաշիլը գալիս ա՛» և այլն։ Ծանօթ ու անծանօթ անց ու դարձ անողի հասցէին, անպատճառ, մի որ և է բան հիւսելու են։

Այսպէս, բնութեան գրկում, բաց դաշտում, ամառուան ամիսներում՝ յունիսի վերջերէն մինչև յուլիսի սկիզբները, իւրաքանչիւր օր, իւրաքանչիւր գիշեր, իւրաքանչիւր գիւղի դաշտերում, վարելահողերում, չորս կողմէն արձագանգում են բազմերանգ գութանների բերկրալից ու գունազեղ ձայները, որոնք լեցնում են ցնծութեամբ գիւղացու սիրտը, նրան ոյժ ու աշխոյժ տալիս և յո՛յս՝ կրկին մէկ տարուան պաշարի։

Գութանների տեսակ տեսակ բացագանչութիւններն առաջ են եկել, ըստ ամենայնի, գոմշի ձայնանմանութենէն։

Իւրաքանչիւր անասուն ևս ունի իրեն յատուկ հնչումն ու ձայնումը՝ նայելով արտայայտութեան զանազանակերպ եղանակներին՝ համաձայն համապատասխան ձայնարանների բնախօսական կազմութեան։

Գոմշուկի և գութանի ձայնանմանութիւններէն հայ գեղջուկի փոխ առած լեզուի վերլուծութիւնը չորսի դասեցինք։

Ա. Չ Ա Յ Ն Ա Ի Ո Ր Ն Ե Ր

ա. և. կ. ի. օ.

և և ի երկրորդաձևերումն է երեւան գալիս. իսկ ա, կ, օ, անխտիր և այս երկու ձևով.

Կարձ՝ ա՛. կ՛. օ՛.

Երկար՝ ա՛. կ՛. օ՛:

Բ. Ե Ր Կ Բ Ա Ռ Դ Բ Ա Ր Ն Ե Ր

եօ. եօս. իւ. օս. օյ.

Իւ պատահում է պոխզի բառում. օս և օյ, հօս և հօյ բացազանչութիւններում. իսկ եօ և եօս, ինքնուրոյն են:

Երկբարբառներն ունին չորս ձև.

Կարճ՝ եօ՛, ի՛ւ, օ՛յ.

Երկար՝ եօ՛, եօ՛-ւ. օ՛-ւ,

Կարճ-երկար՝ եօ՛-ւ. օ՛-ւ. օ՛յ.

Երկար-կարճ՝ եօ՛. օ՛յ:

Գ. Բ Ա Ղ Ա Զ Ա Յ Ն Ե Ր

գ. հ. յ. պ. ռ.

գ. Կակուղ և քմքային.

հ. Թանձր և կոկորդային.

յ. Հնչաւոր կիսաձայն.

պ. Լերկ և շրթնային.

ռ. Կրկնակ և շրթնային:

Դ. Բ Ա Ռ Ե Ր

եօ. } Գումշուկի ձայնանմանութիւն.
եօս. }

հե. Գութանի ակի ձայնանմանութիւն.

հօ. }
հօս. } Գումշի ձայնանմանութիւնը.
հօյ. }

Ճրլ-վի՛ւս. Գութանի ակի լացը՝ ձայնը.

Պո՛կ-րե. } Փռնչոցի ձայնանմանութեամբ

Պո՛ի՛-գի. } և գուշուկս փաղաքչական իմաստով

Պո՛-րօ. } կազմուած հասարակ անուններ

Իսկ մարդկային ձայնի բացազանչութիւններէն գործ են ածուած միայն այս երեքը.

այ. Յուցական.

հա. Հրամայական.

օ. Զարմացական:

Թէ ինչ իմաստ և զգացում է թազնուած այս բացազանչութիւններում, կը պարզենք, երբ խօսինք գութաներդի ոճի և ոգու մասին առհասարակ՝ վերջում:

Բ Ա Ռ Ե Ր Ը

Օրհնեալ է Աստուած,

Յիշեալ է Աստուած:

Հուսը լուսացաւ,
Փանֆ Քեզ, Տէր.

Բարին շատացաւ:

Աղօթրան բացուաւ,
Փանֆ Քեզ, փանֆ.

Մեր ժամը լըցուաւ:

Եզնարած քընի,
Վէ՛ր կացիք, գուրա՛նուոր.

Գութանը բանի:

Գալիս, գալիս է,
Ա՛յ, նրդ-փ՛ւս, նրդ-փ՛ւս.

Ակը լալիս է:

Օրհնեալ է Աստուած,

Յիշեալ է Աստուած:

Մաճկալը մաճին,

Այ հորեւոր,

Օղերն ականջին:

Հօտաղն է լալի,
Քշի՛, այ շալիկ հօտաղ,

Միջակն է գալի:

Վարենք՝ շատանայ,

Տո՛կան ջան,

Տէրն ուրախանայ:

Թա՛փ տուր՝ թեւ արա,

Այ խոփ ու ձեւիչ,

Շուռ տուր՝ սեւ արա:

Օրհնեալ է Աստուած,

Յիշեալ է Աստուած:

Զօրանա՛ս. հօ՛տաղ,

Քշի՛ր, փոշեւուն.

Ես քեզի մատաղ.

Վարենք՝ արտ անենք,

Շեկիկ ջան,

Զարին դարդ անենք:

Եկաւ ու գընաց,

Զրկո՛ւրի սամին.

Մեծ եզը մընաց:

Թևին գործ դընենք,
Այ կրտիչ ուժուր.
Շուտ գըլուխ ելնենք:

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած:

Շալակ ես առել,
Սնիկ ջան,
Շալակդ առաւել:

Ծիր տուր, հա՛ ծրենք,
Կարմիր խընձորտուն,
Հացն եկաւ ուտենք:

Հողը սեւանայ,
Ծիրան ջան,
Ուսըդ հովանայ:

Հորիքն ելաւ,
Քշի՛, այ շալիկ հօսադ,
Առաւելն ելաւ:

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած:

Կերանք կըշտացանք,
Փառք իրան.
Աստուած գոհացանք:

Մանկալ ջան, վարէ՛,
Սեր, մածուն կերար,
Արաք շատ քար է:

Սեւ հերկի՛ն աշէք.
Մուկն ի բերան մըկանուոր,
Այ եզներ, քաշէ՛ք:
Այ առաւել ա,
Սիրուն ջան,
Շալակդ առաւել ա:

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած:

Այ պապիս գութան,
Ասծու բան,
Ակօսիդ զուբան:

Դէ՛, գոմշի ճուտ ես,
Ծաղիկ եզր,
Այ, ճիպոտ կուտես:

Շալակըդ ծանր ա,
Անունիդ անուն
Բէլքըդ շատ մանր ա:
Դարձէ՛ք աջ թեւին,
Այ խարզակնուն.
Զօ՛ւ արէք Աւին:

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեալ է Աստուած:

Ակը խորին է,
Ճըրիլս, նըրիլս,
Զարի փորին է:
Վե՛ր քաշի, հօտաղ, —
Անուշ ջան,
Շընչալուդ մատաղ:
Ետակը լըծենք,
Հօտուն՛չ տուխ,
Միջակը լըցենք:
Միջակը հանենք
Այ անդուոր,
Գութանից պըրծենք:

Օրհնեա՛լ է Աստուած,

Յիշեա՛լ է Աստուած,

Բիկնահովին է,

Օրն անցաւ.

Գոմշի գովին է:

Ամպը հով արաւ,

Ի՛հ, քաշի՛ք,

Տօղը ծով արաւ:

Ապրի հօտաղը,

Բշի՛, այ չըղայ,

Մորթենք մատաղը:

Հոռովելը տանք,

Այ կարմիր գըլուխ,

Առաւել դուրս գանք:

Օրհնեա՛լ է Աստուած,

Յիշեա՛լ է Աստուած:

Վարենք մատաղի,

Խերն ու քարին մեզ,

Զարկամ կատաղի:

Ակօսն ոսկի ա,

Այ սափը ճշդի,

Մանկալ խօսքի ա:

Հոռովել տուէք,

Այ մուրսարուն,

Չարկամ փախցըրէք:

Ելաւ, հա՛, ելաւ,

Մըռընչոցիդ մասադ,

Գութանը ելաւ:

Օրհնեա՛լ է Աստուած,

Յիշեա՛լ է Աստուած:

Սարին հովել է,

Ապրի՛ օրավար,

Տէրը գովել է:

Աստըծուն փառք տանք,

Մա՛նկալ ջան,

Գութանը թո՛ղ տանք:

Օրհնեա՛լ ես, Աստուած,

Փա՛նք Քնդ, փա՛նք,

Յիշեա՛լ ես, Աստուած:

Օրհնի՛ մեր գութան,

Աստըծու բան,

Օրհնեա՛լ է մեր բան:

Շ Է Ն Ք Ը

Ա. Ե Դ Ա Ն Ա Կ Ի

Եզանակը բաղկացած է հինգ նախադասութենէ՝ այս դասաւորութեամբ.

$$Ա + 2 (Բ + Գ) + Բ + 2 (Դ + Բ + Գ) + Ե:$$

«Գ»ն «Ա»ի ընդարձակումն ու ոճաւորումն է. իսկ Ա, Բ, Դ և Ե՝ անկախ են:

Վերի նախադասութիւնները կազմուած են նոյն կամ այլ հատուածներէ՝ հետեւեալ կերպով.

$$Ա = 3 ա + բ.$$

$$Բ = 3 ա.$$

$$Գ = ա + բ + գ.$$

$$Դ = 3 ա + բ.$$

$$Ե = ա + բ + 2 գ + զ.$$

Բ. ՉԱՅՆԱՇԱՐԻ

Հօռու գութաներգը պտոյտ է գալիս փոքր իննեակի սահմանում և կիրարկում է տասն և չորս տեսակ ձայն, որ են՝ իջման կարգով.

ԹԻՒ	ՈՐԱԿ	ՔԱՆԱԿ	ՄԻՋՈՑ
14	Պարզ	Ութեակ	— $\frac{1}{2}$
13	Մեծ	Եօթեակ	
12	Փոքր	Վեցեակ	— $\frac{1}{2}$
11	Մեծ		— $\frac{1}{2}$
10	Փոքր	Հնգեակ	0
9	Մեծագոյն		— $\frac{1}{2}$
8	Պարզ		— $\frac{1}{2}$
7	Փոքրագոյն	Քառեակ	— $\frac{1}{2}$
6	Պարզ		— $\frac{1}{2}$
5	Մեծ	Եռեակ	— $\frac{1}{2}$
4	Մեծագոյն	Երկեակ	— $\frac{1}{2}$
3	Մեծ		1
2	Պարզ	Միակ	— $\frac{1}{2}$
1	Մեծ	Եօթեակ	

Այս ընդհանուր ձայնաշարը կարելի է ամփոփել մէկ պարզ ութեակի սահմանում, եթէ ձուլննք վարի եօթեակը՝ նախկին փոքր իննեակը, նոյնպիսի վերինին. այսպիսով առաջ կը գայ մի ձայնաշար՝ ութեակի տարածութեամբ, որի բոլոր միջոցները կէս են, բացի վերջին մէկ ամբողջ աստիճանէն՝ միակի և երկեակի մէջ և՛ մէկ նոյնաձայնէն՝ փոքր վեցեակն ու մեծագոյն հնգեակը. (տես թիւ 3—2 և 10—9):

Այդ ձայնաշարի նոյն կամ զանազան աստիճաններէն սկիզբն է առնում հինգ տեսակ իջման հինգունակ, ուր առընթեր ձայների յարարերութիւնն է՝ պարզ հնգեակի սահմանում.

$$\begin{aligned} \omega & . \quad 1\frac{1}{2}, \frac{1}{2}, 1, \frac{1}{2}. \\ \rho & . \quad 1, \frac{1}{2}, \frac{1}{2}, 1\frac{1}{2}. \end{aligned}$$

փոքրագոյնի՝

$$\begin{aligned} \tau & . \quad \frac{1}{2}, 1\frac{1}{2}, \frac{1}{2}, \frac{1}{2}. \\ \eta & . \quad \frac{1}{2}, \frac{1}{2}, 1\frac{1}{2}, \frac{1}{2}. \end{aligned}$$

և փոքրապատիկի՝

$$\epsilon . \quad \frac{1}{2}, 1, \frac{1}{2}, \frac{1}{2}.$$

Գ. Ա Մ Ա Ն Ա Կ Ի

Գործածական են երկար ձայնամանակներէն՝

$$\frac{30}{16}, \frac{25}{16}, \frac{12}{16}, \frac{6}{16}, \frac{4}{16}, \frac{3}{16}, \frac{2}{16}.$$

կարճերէն՝

$$\frac{1}{16} \text{ և } \frac{1}{8}.$$

Իսկ շնչամանակներէն, միայն երկար՝

$$\frac{10}{16}, \frac{9}{16}, \frac{4}{16} \text{ և } \frac{4}{8} + \frac{1}{16}.$$

Եթէ զարկն իբր ձայն չը հաշուենք, մէկ վանկին բաժին է ընկնում միայն 1—5 ձայն.

Իսկ մէկ բաժանման՝ շունչ՝ սկզբէն՝

$$\frac{2}{16} \text{ կամ } \frac{4}{16}.$$

և վերջէն՝

$$\frac{4}{16} \text{ կամ } \frac{4}{8} + \frac{1}{16}.$$

Դ. Կ Շ Ի Ռ Ի

Եղանակն ունի երկու կշիռ՝ հինգ և տասն.

$$\begin{array}{ccc} 5 & 5 & 10 \\ 16 & 8 & 16 \end{array} \text{ և } \frac{10}{16}.$$

Երեքն էլ բարդ են և կազմուած այս պարզ բաղադրիչներէն՝

$$\frac{5}{16} = \frac{2}{16} + \frac{3}{16} \text{ կամ } \frac{3}{16} + \frac{2}{16}.$$

$$\frac{5}{8} = \frac{2}{8} + \text{կամ } \frac{3}{8} + \frac{2}{8}.$$

$$\frac{10}{16} = \frac{2}{16} + \frac{2}{16} + \frac{2}{16} + \frac{2}{16}.$$

Ե. Չ Ա Փ Ի.

Հիմնական ընթացքն է՝

Արագ,
Գնայուն.

սակայն, ըստ պահանջման փոփոխութիւն է կրում դէպի արագունն ու տարածունը՝ մէկէն, կամ՝ անելով ու նուազելով:

Զ. Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ի Թ Ե Ա Ն

Երգի ընդհանուր բանաստեղծութիւնն օղակաւոր ու ճոխ հիւսուածք է բառի, կրկնակի և զանչի, որոնք այլ և այլ կազմ ու բովանդակութիւն ունին: Մաւալով ընդարձակագոյնն է նախ գանչը, ապա՝ կրկնակը և յետոյ՝ բառը:

Բառ ստելով, այստեղ, հասկանալու է երգի բուն բանաստեղծութիւնը, նիւթն է աղօթք, գոհութիւն, հաւատալիք, սովորոյթ, աշխատանք, հրաման, խրախոյս, գուրգուրանք, զայրոյթ, գոհունակութիւն, հացն ու բնութիւն: Կրկնակի նիւթն է աւետիք, փաղաքշանք և քաջալերութիւն. իսկ գանչի՝ բացառապէս բացագանչութիւն՝ գոմշուկի ձայնը, փնչոցն ու փռնչոցը՝ մերթ իբր հրաման, մերթ իբր զայրոյթ, մերթ՝ քաջալերութիւն, մերթ՝ ծաղր, մերթ՝ սուետիք, մերթ՝ փայփայանք և մերթ՝ գոհունակութիւն:

Այդ երեքն ի միասին — բառ, կրկնակ և գանչ — տալիս են, մէկ թափով և իրար շաղկապուած, գութաներգի, ուրեմն և զեղջուկ կեանքի լրիւ պատկերը՝ շինականի նուրբ ու սուրբ, խոր ու լայն, պարզ ու վեհ, ազատ ու արձակ ստեղծագործ ոյժը:

Է. Տ Ա Ղ Ա Չ Ա Փ Ո Ի Թ Ե Ա Ն

Բառի տաղաչափութիւնը երկատող ու հինգ վանկանի է և այսպէս բաշխուած՝

$$1 + 4, 2 + 3, 3 + 2, 1 + 2 + 2:$$

Կրկնակն ունի երկու ոճ՝ արձակ և չափական. արձակը միատող է և երեքէն եօթ վանկանի. եռավանկի կազմն է՝

$$2 + 1, 1 + 2.$$

քառավանկի՝

$$1 + 3, 3 + 1, 2 + 2.$$

հնգավանկի՝

$$2 + 3, 3 + 2, 2 + 2 + 1, 1 + 2 + 2.$$

վեցավանկի՝

$$3 + 3, 2 + 2 + 2.$$

և եօթնավանկի՝

$$4 + 3 \text{ կամ } 2 + 2 + 3:$$

Բառի, կրկնակի և գանչի հիւսուածքն այս է՝ բառն ընդմիջում են գանչն ու կրկնակը. կրկնակը՝ գանչն ու բառը, կամ միայն գանչը. իսկ գանչն առաւել համարձակ գործածութիւն ունի՝ երեւում է և՛ բառի և՛ կրկնակի, թէ՛ սկիզբը, թէ՛ վերջը:

ՈՃՆ ՈՒ ՈԳԻՆ

Ա. ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

Գութաներգին ու անձնական հետազօտութիւններին յենուելով՝ պիտի ջանանք վերլուծել, մանաւանդ այն պէս պէս, ըստ երեւոյթին անիմաստ, կրկնակներն ու բացագանչութիւնները, որոնք երգիս բուն ուղն ու ծուծն են և նշանակ՝ հայ գեղջուկ մտքի բանաստեղծ կարողութիւններ:

Բառը, կրկնակն ու գանչն առաջ են դալիս ո՛չ իրր ուրոյն ուրոյն և ամբողջական եղանակներով, այլ՝ յատկական բնո՛յթ կրող ոլորումներով՝ միասին կապելու մի գողտրիկ երգափունջ՝ ընդելուզուած բնատիպար գունագեղ ձայնումներով:

Սրգը բանաստեղծութեան ու եղանակի, ամանակի ու կշիռի՝ արտաքին և ներքին, կատարեալ ներդաշնակութիւն է, որի հիմն է հիւնգը:

Բանաստեղծութիւնը հիւնգ վանկանի է:

Սղանակն ունի հիւնգ նախադասութիւն:

Նախադասութիւնները պարունակում են հիւնգ կամ երկու հինգ հատած:

Հատածների իւրաքանչիւր բաժանումը բովանդակում է հիւնգ ամանակի միութիւն:

Հինգունակների թիւը հիւնգ է:

Սրկար ձայները տեւում են հիւնգ բաժանում:

Բաժանման առաւելագոյն ձայների գումարն է հիւնգ, կամ՝ հինգունակները բունում են մէկ բաժանում:

Կշիռի հիմն է հիւնգ չափը:

Ուրեմն լօռու գութաներգի ընդհանուր ղեկն է հիւնգ թիւը:

Բ. ՉԱՅՆԱՇԱՐԻ

Չայնաշարն ունի հիմնական և երկրորդական ձայներ: Հիմնականներն են եղանակի նախադասութեանց սկզբին և վերջին յատուկ ձայներ, իսկ երկրորդականները՝ մնացեալները: Թ՛ է առաջինները և թ՛ է երկրորդները կազմում են այլ և այլ հինգունակներ: Սղանակի նախադասութեանց սկզբին ու վերջին յատուկ ձայների հիմնական հինգունակն է՝

էջ՝ $\frac{1}{2}$, 1, 1, $\frac{1}{2}$.

Իսկ ածանցումներն են, իրենց յաջորդութեան կարգով, երկրորդականները. առաջին և երրորդ նախադասութեան համար՝

էջ՝ $\frac{1}{2}$, $1\frac{1}{2}$, $\frac{1}{2}$, $\frac{1}{2}$.

» $\frac{1}{2}$, $\frac{1}{2}$, $1\frac{1}{2}$, $\frac{1}{2}$.

և $\frac{1}{2}$, 1, $\frac{1}{2}$, $\frac{1}{2}$.

Երկրորդի և հինգերորդի՝

էջ՝ 1, $\frac{1}{2}$, $\frac{1}{2}$, $1\frac{1}{2}$.

Իսկ չորրորդի՝

էջ՝ 1¹/₂, 1¹/₂, 1, 1¹/₂՝

Հիմնականն իր սկիզբն առնում է փոքր եօթեակէն և իջնում է մինչև մեծ եռեակ. ածանցականներէն առաջին երկուսը՝ նոյնպէս. երրորդը՝ փոքր վեցեակէն մեծագոյն երկեակ. չորրորդը՝ պարզ հնգեակէն պարզ միակ. և հինգերորդը՝ մեծ եօթեակէն մեծ եռեակ: Իւրաքանչիւր հինգունակ և ձայն աստիճան ունի երգում իր յատուկ դերը:

Հիմնական հինգունակն է ամբողջ երգի վարիչը. իսկ ածանցականները, բացի չորրորդ նախադասութենէն, որ առաւել ոճաւոր է և բացառիկ դիրք է գրաւում, երեւում են լոկ իբր աստիճանական վայրաչեղ շաղկապ. մերթ իրար են կապում զանազան հատուածներ, որպէս առաջին և չորրորդ նախադասութեան համար՝ առաջին և երկրորդ ածանցականները. երկրորդի և հինգերորդի՝ չորրորդը. մերթ թաւալում են, միմեանց յաջորդելով, իբր աստիճանական յարաչար, որպէս երկրորդն ու երրորդն առաջին և երրորդ նախադասութեան համար. և մերթ անկախ եղանակ են առաջ բերում, որպէս հինգերորդ ածանցականը հիմնում է չորրորդ նախադասութիւնը և չորրորդ հինգունակը՝ հինգերորդ նախադասութիւնը:

Հիմնական հինգունակի միջուկն է, իբր ասու և բուն վերջաձայն, պարզ հնգեակը, որ, միևնոյն ժամանակ, եղանակի յնարանն է. կտատարն է՝ իբր շեշտ, փոքր եօթեակը և ստորտար՝ իբր երկրորդ վերջաձայն, մեծ եռեակը. իսկ սոցա միջանկեալները՝ մեծ վեցեակն ու պարզ քառեակը, գրաւում են միայն երկրորդական դիրք իբր անցիկ՝ մէկը և շեշտ-անցիկ՝ միւսը:

Այսպէս, երեք գլխաւոր ձայնաստիճանները—փոքր եօթեակ, պարզ հնգեակ և մեծ եռեակ—կերտում են մի փոքրագոյն դաշնակ: Փոքրագոյն դաշնակը վերէն ու վարէն անցողակի լրացնում են պարզ ութեակն ու պարզ միակը և ձեւացնում փոքր եօթ-դաշնակ: Չայնաչարի մնացեալ բոլոր աստիճանները երկրորդաբար անցնում և կազմում են եղանակի բուն իսկ զարդաձայները:

Եղանակը հիմնուած է հետեւեալ ձայնամիջոցների վրայ՝

- Երկեակ,
- Եռեակ,
- Քառեակ,
- Հնգեակ և
- Եօթեակ

իրենց պէս պէս փոփոխութիւններով. ստորև ամփոփուած են բոլոր գործածուած ձայնամիջոցների և ձեւափոխութիւնների ընդհանուր ցանկը, որ բաժնուած է երկու մասի՝ աստիճանական և ընդմէջ: Ընդմէջները պատահում են նախադասութեանց վերջ՝ անկախաբար, ընթացքում՝ իբր յարաչար և երկու զանազան նախադասութեան կամ հատուածի հակառակ ծայրերի միջոցում:

ՅԱՆԿ ԿԻՐԱՐԿՈՒԱԾ ԶԱՅՆԱՄԻՋՈՑՆԵՐԻ							
ԶԱՅՆԱՄԻՋՈՑՆԵՐ		Ն Ա Խ Ա Դ Ա Ս ՈՒ Թ Ի Ի Ն					ԸՅԲԱՅԲ
ՈՐԱԿ	Քանակ	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	
Փոֆր	Երկեակ	էջ, ԵԼ	էջ, ԵԼ	էջ, ԵԼ	ԵԼ	էջ, ԵԼ	Առօրինակաց
Մեծ		էջ, ԵԼ	էջ, ԵԼ	էջ, ԵԼ	էջ, ԵԼ	էջ	
Մեծագոյն		էջ	էջ	էջ	ԵԼ	էջ	
Փոֆրագոյն	Եռեակ	ԵԼ		ԵԼ			ԸՅԳԵԷՉ
Փոֆր		ԵԼ	ԵԼ	ԵԼ	էջ	ԵԼ	
Մեծ					էջ	ԵԼ	
Փոֆրագոյն	Քառեակ	ԵԼ		ԵԼ			ԸՅԳԵԷՉ
Պարզ		ԵԼ	ԵԼ	ԵԼ	ԵԼ	ԵԼ	
Փոֆրագոյն	Հնգեակ	ԵԼ		ԵԼ	էջ		ԸՅԳԵԷՉ
Պարզ						ԵԼ	
Փոֆրագոյն	Եօթեակ		էջ				ԸՅԳԵԷՉ

Գ. ԵՂԱՆԱԿԻ

Ա. ԲԱՌԻ

Բառերը պատահում են միայն առաջին ու երրորդ նախադասութեան սկզբում և եղանակը պտոյտ է գալիս փոքր եօթեակի և պարզ ութեակի սահմանում, այսինքն բովանդակութիւնն է մեծ երկեակի ձայնամիջոցը: Թէպէտ օրհնեաց բառի առաջին վանկն սկիզբն առնում է մեծ եռեակէն և փոքրագոյն հնգեակ թռիչքով է միանում երկրորդ վանկին՝ փոքր եօթեակին, բայց ո՛չ իբր անկախ թռիչք, այլ այնպիսի, որ ծագել է նախընթաց հօ գանչի վերջին ձայնի յապաղումէն, ուստի բառի բուն ձայնաչարէն դուրս է յուրեմն բառերի համար առանձին

եղանակ հիւսուած չէ, այլ, պարզապէս, ըստ առողանութեան, արտա-
սանուած են երկու ձայնով՝ սարգ ութեակով և փոքր եօթեակով.
առաջինն իբր ասածայն՝ բառեղանակի հիմնածայն և միւսը՝ շեշտածայն՝
այս երեք երեւոյթով.

Ա. Շեշտ՝ սարգ ութեակէն փոքր եօթեակ.

Բ. Չարկ՝ ըստ վերինի և

Գ. Երկար՝ փոքր եօթեակէն պարզ ութեակ:

Այս կերպ գործածութիւն ունի և՛ բառի իւրաքանչիւր տան երկու
առդի մէջ պարփակուած կրկնակները, որոնք երրորդ նախադասութեան
սկիզբն են ընկնում: Վերջիչած բոլոր հանդամանքներն ապացոյց են,
թէ երգի բուն ոգին ո՛չ բառերը, այլ, որպէս յետոյ պիտի տեսնենք,
կրկնակն ու զանչն են:

Բ. ԿՐԿՆԱԿԻ

Կրկնակ պատահում է երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ
նախադասութեան ընթացքում:

Երկրորդ նախադասութեան կրկնակը գործ է ածում

Ա. 2. Մեծագոյն երկեակ,

3. Մեծ եռեակ և

4. Պարզ քառեակ.

2 և 3 յաջորդաբար ելնող շեշտ են. իսկ 4+3՝ իջնող շեշտերկար:

Բ. 7. Մեծ եօթեակ՝ վարի,

1. Պարզ միակ,

2. Փոքր երկեակ,

3. Մեծ եռեակ և

4. Պարզ քառեակ.

7 և 2 աճող շեշտ են. 1 անցիկ

է՝ 7 և 2 շեշտածայնների մէջ. 4 + 3՝ իջման շեշտերկար:

Երրորդինի մասին վերեւ յիշուեցաւ:

Չորրորդինը գործ է ածում

7. Մեծ եօթեակ,

6. Փոքր վեցեակ,

5. Պարզ հնգեակ,

4. Պարզ քառեակ և

3. Մեծ եռեակ.

6+7, 5+6 ելնող շեշտերկար են. 4+3՝ իջնող է. 5+6+4՝ ել և էջ անող.

6՝ սկզբում երկար շաղկապ է. 5՝ կենդրոնը և 3՝ վերջը:

Հինգերորդինը գործ է ածում

5. Պարզ հնգեակ,

4. Պարզ քառեակ,

3. Մեծ եռեակ,

2. Մեծագոյն երկեակ և

1. Պարզ միակ

Նախադասութեան առաջին մասում 5 ասու է, այսինքն բառ ասելու կամ եղանակաւոր արտասանելու ձայնն է. իսկ երկրորդում՝ 3. 4+3+2+1՝ իջման շեշտերկար:

Գ. Գ Ա Ն Ձ Ի

Գանչի հանդիպում ենք երգի բոլոր նախադասութիւններում:
Առաջին նախադասութեան գանչի կիրարկած ձայներն են

- Ա. 8. Պարզ ութեակ,
- 7. Փոքր եօթեակ,
- 6. Մեծ վեցեակ,
- 5. Փոքրագոյն հնգեակ,
- 4. Պարզ քառեակ և
- 3. Մեծ եռեակ.

8 սկզբում երկար շեշտ, միջում կարճ զարկ և վերջում կարուկ շեշտ է. իսկ 7+6+5+4+3՝ իջման շեշտերկար:

- Բ. 7. Փոքր եօթեակ,
- 6. Մեծ վեցեակ,
- 5. Մեծագոյն հնգեակ,
- 4. Պարզ քառեակ և
- 3. Մեծ եռեակ.

7 + 6 շեշտերկար է. 5 + 4 + 3՝ երկար. 6 առանձին՝ երկար շեշտ.

- Գ. 6. Փոքր վեցեակ,
- 5. Պարզ հնգեակ,
- 4. Պարզ քառեակ,
- 3. Մեծ եռեակ և
- 2. Մեծագոյն երկեակ.

6 + 5 + 3, 3 + 2 շեշտերկար են. 5՝ շեշտերկար վերջաձայն. 2՝ նախ շեշտ, ապա՝ երկար:

Երկրորդինը գործ է ածում

- 5. Պարզ հնգեակ,
- 4. Պարզ քառեակ,
- 3. Մեծ եռեակ,
- 2. Մեծագոյն երկեակ և
- 1. Պարզ միակ.

5 շեշտ է սկզբում և միջում և երկար՝ վերջում. 5 + 4 և 5 + 4 + 3՝ շեշտերկար. 3 + 2 + 1՝ երկար:

Երրորդինն էլ առաջինի պէս է Բ՝ ում, իսկ Ա՝ ում ձայների պաշտօնն է՝

7 + 6 + 5 + 4 + 3, 7 + 6 + 5, 7 + 6 և 4 + 3 իջման շեշտերկար են և 5 + 6 + 7՝ ելման. 8 զարկ կամ կարուկ շեշտ է. 5՝ շեշտ կամ երկար:

Չորրորդինը՝

- 8. Պարզ ութեակ,
- 7. Մեծ եօթեակ,
- 6. Փոքր վեցեակ,
- 5. Պարզ հնգեակ և
- 4. Պարզ քառեակ.

7 + 8 և 6 + 7 ելման, իսկ 5 + 4 իջման շեշտերկար են:

Հինգերորդինը՝

- 8. Պարզ ութեակ,
- 5. Պարզ հնգեակ,
- 4. Պարզ քառեակ,
- 3. Մեծ եռեակ,
- 2. Մեծագոյն երկեակ և
- 1. Պարզ միակ.

5 կարճ ու երկար շեշտ և երկար վերջաձայն է. 4 + 3 + 2 + 1 և 4 + 3 շեշտերկար են. 8 կարճ վերջաձայն է:

Դ. ԱՄԱՆԱԿԻ

Ա. Բ Ա Ռ Ի

Առաջին տողերի սկզբի չորս վանկերէն իւրաքանչիւրն ունին $\frac{1}{16}$ և երկրորդներէն՝ $\frac{2}{16}$ կամ $\frac{1}{16} + \frac{1}{16}$. առաջինների հինգերորդ վանկերը ձիգ ու երկար են. «Յիշեալ է Աստուած», բացառաբար, $\frac{1}{16}$ է, իսկ երկրորդներինը՝ մերթ $\frac{1}{16}$ և մերթ՝ $\frac{1}{8}$,

Բ. Կ Ր Կ Ն Ա Կ Ի

Երկրորդ նախադասութեան մէջ մի հատուածի սկզբի երեք վանկէն իւրաքանչիւրն ունի $\frac{1}{16}$ տեւումն, իսկ չորրորդը՝ $\frac{1}{16} + \frac{1}{16}$: Երրորդ նախադասութեան ամէն մի վանկն ունի $\frac{1}{16}$, $\frac{2}{16}$ կամ $\frac{1}{16} + \frac{1}{16}$ տեւումն:

Չորրորդինները, փոխ առ փոխ, ունին $\frac{2}{8}$ և $\frac{3}{8}$ տեւումն:

Հինգերորդիններէն ամէն մէկն ունի սկզբում $\frac{1}{16}$, իսկ վերջում՝ $\frac{6}{16}$ տեւողութիւն:

Գ. Գ Ա Ն Չ Ի

Առաջին նախադասութեան երկու հատուածների և երրորդի սկիզբն ու վերջը, երկրորդի, չորրորդի և հինգերորդի վերջը միշտ երկար ու ձիգ է. իսկ մէջ տեղերն այլազան են՝ $\frac{1}{16} + \frac{1}{16}$, $\frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16}$, $\frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16}$, $\frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16}$, $\frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16}$ ամանակներն են առաջին և երրորդի համար. $\frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16}$, $\frac{2}{16}$ երկրորդի. $\frac{2}{8} + \frac{1}{8}$, $\frac{1}{8} + \frac{1}{8}$, $\frac{3}{8} + \frac{1}{8}$, $\frac{3}{8}$, $\frac{1}{16}$ չորրորդի և $\frac{2}{16}$, $\frac{1}{16} + \frac{2}{16}$, $\frac{1}{16}$, $\frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16}$ հինգերորդի:

Ե. Կ Շ Ի Ռ Ի

Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ նախադասութեան կշիռն է՝

' - ' - - կամ ' - - ' -

Հինգերորդի սկզբում և վերջում՝

' - ' - - կամ ' - - - -

Իսկ միջում՝

' - ' - ' - և ' - - - -

Շեշտերն ընկնում են բացազանչութեանց և կրկնակների վրայ, իսկ թէ ո՞ր ձայնի կամ ի՞նչ կարգով՝ արդէն վերեւ յիշուեցան: Ըեղհա- նուր կշիռն է հնգաչափը, որ աշխոյժ տեղերում $\frac{5}{16}$ է, խաղաղ մասե- րում՝ $\frac{6}{8}$ և շտապ հատուածներում՝ $\frac{10}{16}$, որ է $5 \times \frac{2}{16}$:

Բառերի և կրկնակների իւրաքանչիւր մէկ տողը բռնում է միայն մէկ կամ երկու հնգաչափ կշիռ, իսկ գանչերինը՝ մեծագոյն մասը:

Զ. Չ Ա Փ Ի

Առաջին ու երրորդ նախադասութեան չափն ընդարձակ է, երկրորդինն ու մանաւանդ հինգերորդինը՝ շարժուն և չորրորդինը՝ հանդարտիկ:

Բառերը չափի տեսակէտէն ո՛չ մի տրժէք չունին՝ միշտ հաւասար են ու ընթացիկ. այն ինչ, կրկնակներն ու գանչերն ունին աճուն կամ նուազուն արագութիւն և, ըստ տեղւոյն, նուրբ թեքումներով են հա- մեմուած:

Է. Գ Ո Յ Ն Ի

Ա. Բ Ա Ռ Ի

Տների առաջին տողերը հաւասար են. ունին $\frac{1}{16}$ քաշ և ձայնաս- տիճանն է փոքր եօթեակ. իսկ երկրորդները՝ $\frac{2}{16}$ կամ $2 \times \frac{1}{16}$ քաշ. շեշտաւոր վանկերի ձայնաստիճանն է պարզ ութեակ՝ եթէ հրամայական ու կարճ են և փոքր եօթեակն ու պարզ ութեակն ի միասին՝ եթէ եր- կար են: Թէ բառերն ի՞նչ զգացում են թարգմանում՝ արդէն գրուե- ցաւ. այստեղ ասենք, որ ընդհանուր գոյնն է աշխոյժ պատմական՝ առաջին տողերում և անուշ դիմում՝ երկրորդ:

Բ. Կ Ր Կ Ն Ա Կ Ի

Հրամայական միավանկ կրկնակներն են ա՛ր և սա՛ր. ունին $\frac{1}{16}$ ական քաշ. ձայնաստիճանն է վարի մեծ եօթեակը և յասուկ են միայն երկ- րորդ նախադասութեան, իսկ մնացեալների ձայնաստիճանն է փոքր եօթեակ կամ պարզ ութեակ՝ $\frac{1}{16}$ կամ $\frac{2}{16}$. պատահում են երկրորդ, չորրորդ և հինգերորդ նախադասութեան ընթացքում. եթէ հրամայական է՝ վարէն վեր, փաղաքչական՝ նոյնպէս և աւետական նոյն ձայնի վրայ:

Բազմավանկ կրկնակների ընդհանուր արտայայտութիւնն է գոչական հրաման, քնքուշ փայփայանք, անձնուէր գուրգուրանք և սիրազեղ քա-

ջալերանք. կարծէք շինականն իր ամբողջ հոգին ձուլել է մէն մի կըրկնակի հետ. կարծէք իր ամբողջ կեանքը զոհելու պատրաստ է ջան գոմշուկին ու գութանուոր աշխատակցին:

Գ. Գ Ա Ն Ձ Ի

Բոլոր գանչերի եղանակներն առաջ են եկել գոմշի ձայնանմանութենէն կամ փնչոց ու փռնչոցէն: Գեղջուկ շինականը լսել, հոգեբանօրէն՝ զանազանել է, թէ գոմշի ձայնումն ունի հինգ տեսակ և հինգաստիճան եղանակ, ուրեմն և հինգ այլ և այլ հինգունակ ձայնաշար՝ որպէս վերեւ տեսանք: Հինգունակների ընթացքը վերէն վար է, զի երգը բովանդակում է նախ այնպիսի բացազանչութիւններ, որոց համապատասխան զգացումները հոսում են դէպի վար. և երկրորդ գոմշի ձայնը, որ բուն առիթն ու հիմն է գութաներգի բոլոր ձայնաշարերի, եղանակում է վրէժն վար: Գանչերի զգացումները գեղջուկը ձեւել է գոմշուկի ձայնի վերայ՝ շատ նուրբ հմտութեամբ և հնարագիտութեամբ՝ ծաղրական ոգով, որովհետեւ անասունի ձայնի տակ, կարծես, դիտմամբ, մի անուշ ու կատակաւոր թիճճի անելու միտումն կայ թագուն. պատճառն է նորա հիմնական կոկորդային — որովայնային և մասնակի ռնգային ու քմքի ձայների արձագանգով գունաւորուած զաւեշտական բնոյթը՝ հնչիւնը, որուն կոկաշ են ասում:

Գանչերը հինգ դաս են՝

Ա. այ, դե, հա, օ, — մարդկային գանչեր.

Բ. հե, — գութանի ակի լացը.

Գ. ա, եօ, հօ, հօյ, — գոմշի կուկալը.

Դ. եօա, հօա, հօյեօ, հօյեօա, — գոմշի ձայնումը,

Ե. Պռէրէ, պռիւզի, պռօրօ, — գոմշի փռնչալը:

Գ Ա Ն Ձ Ե Ր Ի Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Այ. — երրորդ նախադասութեան սկզբում. ելք փոքր եօթեակէն պարզ ութեակ. իւրաքանչիւրի ամանակն է $\frac{1}{16}$. նշանակում է ճնս, զգանս, զգոյշ. նիւթն է գոշում՝ իբր նախանձաշարժ, յորդորական կամ սպառնական միջոց. միշտ անկախ է:

Դե. — երրորդ նախադասութեան սկզբում. ելք փոքր եօթեակէն պարզ ութեակ՝ իւրաքանչիւրի ամանակն է $\frac{1}{16}$. միասին երկար են. նշանակում է արթուն, շո՛ւս. նիւթն է գոշում՝ իբր զգաստական և զգուշական միջոց, միշտ անկախ է:

Հա. — երկրորդ նախադասութեան մէջերը. ձայնաստիճանն է ելման պարզ միակ. ամանակ՝ $\frac{1}{16}$. միշտ կարճ է և անշեշտ, զի շեշտն իրմէ առաջ գտնուած միավանկ ա՛ն և սա՛ր կրկնակների վրան է անցել, ուստի ինքն անշեշտ է մնացել. նշանակում է, կրկնակների հետ, ձի՛զ; ֆաշի՛. նիւթն է հրաման՝ իբր յուշական միջոց. երկրորդաբար է առնուած և անկախ չէ:

Հա՛-հա՛. — երրորդ նախադասութեան սկզբում. մէկի ամանակն է $\frac{1}{16}$, միւսինը՝ $\frac{14}{16}$. առաջնի ձայնն է մեծագոյն հնգեակ. երկրորդի ձայնաշարն է ելման մեծագոյն հնգեակ, մեծ վեցեակ և փոքր եօթեակ. առաջնի տեւումն է $\frac{12}{16}$, երկրորդինն ու երրորդինը՝ $\frac{1}{16}$ ական. նշանակում է շո՛ւտ-շո՛ւտ, բա՛ն չը մնա՛ց. նիւթն է հրաման՝ իբր քաջայերական միջոց. կարճն ու երկարը պատահում են իբր բարդ գանչ և երբէ՛ք անկախ:

Օ՛. — երրորդ նախադասութեան մէջ. ձայնաշարն է իջման փոքր եօթեակ, մեծ վեցեակ և մեծագոյն հնգեակ՝ յաջորդաբար. իւրաքանչիւրի ամանակն է $\frac{1}{16}$. միասին երկար են. նշանակում է անսպասելի՛ բան, նիւթն է զարմանք՝ իբր յանկարծական բարկութեան միջոց. անկախ:

Հե, — ձայնանմանութիւն է գութանի ակի և երեք տեսակ է. երեքն էլ երրորդ նախադասութեան սկզբումն են և իրար յաջորդում են այսպէս.

Հե՛. — իջման ձայնաշարն է պարզ ութեակ՝ իբր զարկ. փոքր եօթեակ, մեծ վեցեակ, մեծագոյն հնգեակ, պարզ քառեակ և մեծ եռեակ. վերջին հինգն ունին $\frac{1}{16}$ ական ամանակ, միասին երկար են. նիւթն է գութանի ակի լացը, որ համազօր է գոմշի եղանակին իբր ուշագրաւ միջոց, միշտ իրարմէ կախումն ունին:

Հե՛-հե՛. — նախընթացի շարունակութիւնն է. ճիշդ հա՛-հա՛ գանչի կիրառութիւնն ունի, բայց, այստեղ, ձայնաստիճանը մեծագոյն երկեակի վրայ է իջնում, վերջին երկու արագ ձայները շրջուած են և մէկ առանձին հե՛ վանկ եւս ունին:

Ա. — Հինգերորդ նախադասութեան սկզբում. էջք պարզ քառեակէն մեծ եռեակ՝ $\frac{1}{16} + \frac{2}{16}$ ամանակով, կամ՝ պարզ քառեակ, մեծ եռեակ, մեծագոյն երկեակ և պարզ միակ՝ $\frac{1}{16}$ ականով. նշանակում է հա՛սա՛ն՛ գիւղացին աւետում է, թէ ծիրը վարելով ծայրն ենք եկել, շտապէ՛, որ շունչ առնես. նիւթն է գոչում՝ նշանակ ուրախացնելու, աշխոյժի բերելու:

Հօ՛. — գոմշի հիմնական և յանկարծուստ կոկոցն է. ծագել է խըրուչելու ժամանակ հանած եօ՛ ձայնէն. բոլոր նախադասութիւններում. ձայնաստիճանն է մեծագոյն երկեակ կամ պարզ հնգեակ. և ամանակն է $\frac{1}{16}$ կամ $\frac{1}{8}$. նշանակ արագ ու կայտառ շարժուելու. անկախ չէ:

Հօ՛. առաջին նախադասութեան սկզբում, առաջնի, երրորդի և հինգերորդի վերջում. առաջնի սկզբում ձայնաստիճանն է փոքր եօթեակ, իսկ երեքի էլ վերջում՝ պարզ հնգեակ. ամանակն է $\frac{25}{16}$. գործածական է աշխատանքի դիւրին ժամանակը. նշանակում է հանգի՛ւտ ու անհո՛գ ձգի. նիւթն է գոչում՝ նշանակում է մի՛ր. նշանակ ազատ վարելու. անկախ չէ:

Նոյնը քառաշարով՝ փոքր վեցեակ, պարզ հնգեակ, պարզ քառեակ և մեծ եռեակ՝ առաջին և երրորդ նախադասութեան մէջ. եռաշարով՝ պարզ հնգեակ, պարզ քառեակ և մեծ եռեակ՝ երկրորդի, փոքր եօթեակ, մեծ վեցեակ և մեծագոյն հնգեակ՝ երրորդի, և վերջապէս երկաշարով՝ մեծ եօթեակ ու պարզ ութեակ ելք կամ պարզ հնգեակ ու պարզ

քառեակ էջք՝ չորրորդում . նշանակում է շսայկ՝ . նիւթն է հրաման՝ նշանակ զայրոյթի, բարկութեան, եթէ ձայնաշարը ելման է և նշանակ գուրգուրանքի՝ եթէ իջման է :

Հօ՛-հօ՛ . — գործածութիւնը ճիշդ հի՛-հի՛ գանչի պէս է :

Եօ՛ . — Երկրորդ նախադասութեան վերջում . երկար կռկիւն $\frac{25}{16}$ ամանակով . նոյնազօր է համապատասխան հօ՛ գանչին՝ ծաղրով գունաւորուած :

Հօյ . — առաջին, երկրորդ և երրորդ նախադասութեան ընթացքում . կազմուած է այսպէս՝ հօ-յ . հօ յայտնի է արդէն . իսկ յ գեղայօդ է հօ և ևօ կռկիւնի օ և և ձայնաւորների մէջ : Երեւոյթներն են հօ՛յ և հօ՛յ :

Հօյ՛ . — առաջին և երրորդ նախադասութեան ընթացքում . ձայնաստիճանն է մեծ վեցեակ . ամանակը՝ $\frac{25}{16}$. գործածութիւնը նման է հօ՛-ի-նին, միայն թէ, այստեղ, ձայնումն օ ձայնաւորներէն աւնելով աճում, որոշ սաստկութեան հասնում ու՛ յ կիսաձայնը շեշտելէն անմիջապէս յետոյ, արագաբար սահում է ևօ՛ գանչի վրայ :

Հօյ՛ . — երկրորդ նախադասութեան յատուկ . ձայնաստիճանն է պարզ հնգեակ . ամանակը $\frac{2}{16}$ ՝ գործածութիւնը նման է հօ՛-ինին, բայց այստեղ ձայնաւորի շեշտն արագաբար է անցնում և ձայնը քաշում է յ կիսաձայնի վրայ՝ գրեթէ ամբողջ $\frac{2}{16}$ տեւողութեամբ :

Եօ՛ւ՛ . — առաջին և երրորդ նախադասութեան մէջ . ձայնաշարն է փոքր եօթեակ, մեծ վեցեակ, մեծագոյն հնգեակ, պարզ քառեակ և մեծ եռեակ . ամանակ՝ $2 \times \frac{1}{16} + \frac{1}{16}$. երկրորդ նախադասութեան ձայնաշարն է պարզ հնգեակ, պարզ քառեակ, մեծ եռեակ, մեծագոյն երկեակ և պարզ միակ . ամանակն է $2 \times \frac{1}{16} + 3 \times \frac{1}{16}$. երկու ձեւով էլ նշանակում է սի՛-հւ՛, շո՛ւս-հւ՛ . նիւթն է հրաման՝ նշանակ քաշալիերութեան, որ համեմուած է գոմչի կռկիւնը ծաղրելով . անկախ է :

Հօւ՛ . — հինգերորդ նախադասութեան յատուկ . ձայնաշարն է պարզ հնգեակ, պարզ քառեակ և մեծ եռեակ . ամանակն է $\frac{2}{16} + (\frac{1}{16} + \frac{2}{16})$. նշանակում է շո՛ւս-հւ՛, դի՛-հւ՛ . նիւթն է հրաման՝ սիրաշահելու, խրախուսելու միջոց . անկախ է :

Հօւ՛ . — հինգերորդ նախադասութեան յատուկ . ձայնաշարն է պարզ հնգեակ, պարզ քառեակ, մեծ եռեակ, մեծագոյն երկեակ և պարզ միակ . ամանակն է $\frac{1}{16} + 4 \times \frac{1}{16}$. նշանակում է վի՛րջն ե հւ՛, վի՛րջայի՛ւ . նիւթն է հրաման՝ նախ քաշալիերութեան, ապա հանգստի մօտենալու աւետիք . անկախ է :

Հօյ՛-եօ՛ . երկրորդ նախադասութեան վերջում . ձայնաստիճանն է պարզ հնգեակ . ամանակն է $\frac{2}{16} + \frac{25}{16}$. նշանակում է անյոպի՛ւ, նիւթն է գոչում՝ նշանակ բաւականութեան և հաստատութեան . անկախ է :

Պոկ՛րի, առաջին նախադասութեան սկզբում . ձայնաստիճանն է մեծագոյն երկեակ . ամանակն է $\frac{1}{16}$. նշանակում է փո՛նջացող . նիւթն է դիմում՝ արագ արագ քաշելու, անկախ է :

Պոկ՛րի . չորրորդ նախադասութեան սկզբում . ձայնաստիճանն է պարզ հնգեակ . ամանակն է $\frac{2}{8} + \frac{3}{8}$. նշանակում է փո՛նջացող, նիւթն է դիմում՝ նշանակ ազատ քաշելու . անկախ է :

Պոլիգի. չորրորդ նախադասութեան սկզբում. ելեւէջն է պարզ հնգեակ, փոքր վեցեակ և պարզ քառեակ. ամանակն է $2 \times \frac{1}{16} + \frac{2}{8}$. նշանակում է հոգիւ. նիւթն է կոչիւն՝ նշանակ դուրգուրանքի. անկախ է:

Պոճոճ. չորրորդ նախադասութեան սկզբում. յարաշար ելեւէջն է փոքր վեցեակ, մեծ եօթեակ, պարզ հնգեակ, փոքր վեցեակ, պարզ քառեակ. ամանակն է, հաւասարապէս $\frac{1}{8}$. նշանակում է հոգիւ. նիւթն է կոչիւն՝ նշանակ դուրգուրանքի. անկախ է:

Մնացեալ բոլոր բարդ գանչերն ունին պարզերի համագումար նշանակութիւնն ու գործադրութիւնը:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն


Ոտհրդաւոր ու պաշտելի գաղտնիք. շինականը բնութեան գրկում, բնութիւնը շինականի սրտում վերստին ու միաժամանակ ծնունդ են առնում:

Արեւն արդէն թռել ու գիշերն իր մութն է փռել. ցորեկը հանգել ու գիշերն է գործի կանգնել: Երկու ծով դէմ դէմի են ծառայել՝ կապուտակն երկնային ու զուարթուն և սևուկն երկրային ու արթուն. լուսինն անցել է աստղերի գլուխը՝ հերկելու շարան ամպերը. երգում են տարուբեր հովերը, իսկ մաճկալն անցել է գութանուտորների գլուխը՝ արթնցնելու պարարտ արտերը. նուագում են գլգլան առուակները: Վերև երկինքն է շնչում, ստորև՝ երկիրը. վերն աշխատում են լուսինն ու աստղերը և հողմավար ամպերը, վարը՝ գութանն ու շինականը և գործավար եղները. վերև՝ կեանքն ու ստորև՝ ջանքը յուզում են միտքն ու սրտի լարերը: Շունչ է առնում շինականն ու շունչ տալիս իր շուրջը: Թե՛ է առնում գութանն ու թե՛ տալի մշակին՝ պատուում է արտը, դիզում հողակոյտ ալիքներն աջ ու ձախ և ձեւում ոսկի ակօսների շարը: Հեւում է հեւում ամբողջ վարը՝ և՛ կոկում է գոմշուկը, և՛ գանչում է գեղջուկը, և սուլում է սարի հովիկ, և՛ փոփսում լեռան ծաղիկ, և գլգլում թոթով վտակ, իսկ գութանի ա՛կ՝ հեծում, շալիս, ծրկում, մշխտում, անձողում ու անձողում է: Շինական կեանքի մութն ու լոյսը, գործն ու յոյսը ծնում են մեր գողտրիկ գութաները:

Շինականն այն կախարդ վարպետն է, որ կարդում է, հարազատօրէն, բնութիւնը, ստեղծում բազմաբեղուն մտքեր, նոցա փչում է իր հզօր ու պարզ շունչը, դրօշմում է իր բնաւորութեան էականով՝ ներքին ու արտաքին լրիւ կեանքով և կնքում է բառերով ու եղանակով իր հարազատ զաւակը՝ գութաները:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊՍԵ





ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Բրոքի Փանոս Թերչակզեանի

ԾՐՈՒՆ ԳՐԱԹԱՆՆԵՐԳ.

ժիր. ♩. = 66.

Գրի առաւ, դաշնակեց
Կոմիտասս Վարդապետ.

Մաճկալ.

ա.

Հօ՛: _____

Օրհ-շեւա՛լ է Լիս - տուա՛մ: _____

Գրաթանա-դրներ.

Յի-շեւա՛լ է Լիս-տուա՛մ:

Հօ՛: _____

Հօ՛: _____

բ.

Հօ՛, _____ Հօ՛-ւ, _____

Հօ՛, — Հօ՛-Հօ՛, — Հօ՛, Հօ՛: _____

9. 

Պուէ՛ - րէ, գո՛ւմէ՛ն - հօ՛ւ - հօ՛յ, եօ՛ւ - սի. —
 Լին հա, գո՛ւմէ՛ն - հօ՛ւ - հօ՛յ, եօ՛ւ - սի. —
 Տա՛ր հա, գո՛ւմէ՛ն - հօ՛ւ - հօ՛յ, եօ՛ւ: —





- 7. 1. Լուսար լուսա-ցաւ, ————— հա՛-հա՛յ, —————
- 6. 2. Լի-ըօ-թրան բա-ցուաւ, ————— հա՛-հա՛յ, —————
- 5. 3. Եզ-նա-րան զը-նի, ————— հա՛-հա՛յ, —————
- 4. 4. Գա-լիս, գա-լիս է, ————— հա՛-հա՛յ, —————



- 1. Կաթնաբերկ, ճէր. Բա-րիշ շա-տա-ցաւ: Հէ՛ ————— հէ՛-հէ՛, հէ՛, օ՛ —————
- 2. Կաթնաբերկ, Կաթնաբ. Կէր ժա-ւը լը-ցուաւ: Հէ՛ ————— հէ՛-հէ՛, հէ՛, օ՛ —————




- 3. Կէր կա-ցէր, Գու՛թանոց, Գու՛թանը բա՛նի: Հէ՛ ————— հէ՛-հէ՛, հէ՛, օ՛ —————



- 4. Կ՛ - ա - կը ճըլ-վաւտ, ճըլ-վաւտ, Լա-լիս ս: Հէ՛ ————— հէ՛-հէ՛, հէ՛, օ՛ —————

10. 

Պուէ՛-րէ, ջա՛ն, հօ՛ւ - պո՛ս - ո՛ս, ————— հօ՛ւ, ————— պո՛խ - զի ջա՛ն.



Հօ՛ր, ո՛րչ, այ, հօ՛ւ - ո՛րչ, այ, - քե՛ մա - - տաղ.
 Շի՛ւնայ զա՛ն, հօ՛ւ - ո՛րչ, այ, - քե՛ մեռ - - շիւ՛մ



Ա՛ն-չի՛ն զա՛ն, հօ՛ւ - ո՛րչ, այ, - հօ՛ր, ո՛րչ, այ, - հօ՛ր-ու




օ՛ւ - - - - -




1. Հօ՛յ, դու՛ն է - լաւ, հօ՛ւ-ա՛ւ, - հօ՛յ, դու՛ն է-լաւ, հօ՛ւ-ա՛ւ.
 2. Հօ՛յ, ռաւ-ւել ա, հօ՛ւ-ա՛ւ, - հօ՛յ, ռաւ-ւել ա, հօ՛ւ-ա՛ւ.



1. հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու.
 2. հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու.



1. հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու.
 2. հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու, հօ՛-ու.



հօ՛ւ - - - - - դու՛ն է - լաւ - -



հօ՛ւ - - - - -

Յանտրուածիւն. Երգելու է այս կարգով.
 աբգ. Դ1+բգ. Ե2+բգ. գ. Ե3+բգգ. Ղ4+բգ. Թ1, 2. Ժ